

Բ Ե Ջ Մ Ե Վ Է Պ

ՕՐԱԳԻՐ

ԲՆԵԿԸՆ, ՏՆՏԵՍԵԿԸՆ ԵՒ ԲՆԵՄԻՐԵԿԸՆ

ԳԻՏԵՆԵՐ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 22.

1845

ՆՈՅԵՄԲԵՐԻ 15.

ԲՆԵԿԸՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Փոսֆոր :

Փոսֆոր բառը յունական է¹, որ կընշանակէ լուսակիր, որովհետեւ աս նիւթը մոլթ տեղ ոգ տեսնելով լուսաւոր կերեւոյ : 1669ին Պրանտ անունով համպուրկցի քիմիագետը կարծելով թէ կրնայ մարդ արհեստով ոսկի արծաթ շինել, բան չմնաց որ չփորձէ. և յիրաւի մեծ յուսով երկաթը գոմիզի հետ եփելու ատեն՝ ոսկի գտնելու տեղը գտաւ աս լուսաւոր նիւթը : Իսկայ ինչուան 1730ին ատենները գաղտնի մնաց ասոր գիւտը. ետքէն շատ փորձերով տեսնուեցաւ որ փոսֆորը կենդանական շատ գոյացութեանց մէջ կըգտնուի, ինչպէս ոսկորներու, եղջիւրի, աճառի մէջ և այլն :

Ինուութեան մէջ ոչ երբեք ասիկայ զուտ կըգտնուի, հապա միշտ ուրիշ մարմնոց հետ բաղադրուած. և քիմիական գործողութեամբ մարմիններէն կըհանուի. որ կէս թափանցիկ ճերմակագոյն նիւթ է, և երբեմն դեղնագոյն կամ մոխրագոյն ալ կըլայ : Հալեցընելէն ետեւ յանկարծ

պաղեցընելու ըլլաս նէ՝ գոյնը կըսևնայ, և թէ որ արեւի մէջ դնելու ըլլաս՝ կըկարմրի :

Փոսֆորը բնութեամբ սաստիկ գրգռող է. և մարդ պզտի չափով մըն ալ ուտելով շուտ մը վրան մեծ այլայլութիւն կուգայ, թէպէտ և շատ չտւեր. բայց քիչ մը շատեկ ուտուի նէ՝ ծայրը մահ է : Տեսնական բաներու մէջ կըգործածուի լուցկիք շինելու. այսինքն պզտի նեղկակ շիշի մը մէջ փոսֆոր կըլեցընեն ու կրակի վրայ կըտաքցընեն այնչափ որ բերնէն պզտի բոց մը ելլէ. ան ատեն մէջինը բոլորովին հալած ըլլալով՝ կրակէն ետ կառնեն, ու բերանը սունկով ամուր մը կըգոցեն : Երբոր ուզես ասիկայ գործածել, պէտք է բարակ փայտի կտորուանք ունենաս՝ ծայրերնին ծըծըմբոտած. ան ծայրը փոսֆորին մէջ խոթելուդ ու հանելուդ պէս կըբռնակի, որով կրնաս ճրագ վառել, կրակ բռնկցընել, և այլն :

1 Յուն. Φωσφόρος. Գաղղ. Phosphore.